ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ «ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ» ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գառնիկ Սաֆարյան
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գլխավոր մասնագետ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտահետազոտական աշխատությունների ոլորտում իր ուրույն տեղն ունի պետաիրավական հետազոտությունների բաժինը: Բաժնի աշխատակիցները հիմնարար հետազոտություններ են կատարել հին և միջնադարյան հայ իրավունքի և իրավաքաղաքական մտքի պատմության, իրավունքի տեսության և փիլիսոփայության, սահմանադրական իրավունքի և սահմանադրականության, քրեական իրավունքի, մարդու իրավունքների տեսության, պրակտիկայի և այլ հարակից հիմնահարցերի վերաբերյալ:

<u>ա) Հայ իրավունքի և իրավաքաղաքական մտքի պատմություն</u>

Հայ իրավունքի և իրավաքաղաքական մտքի պատմությանը նվիրված են հետևյալ հիմնական աշխատությունները՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի հեղինակությամբ. «Հայ իրավաքաղաքական միտքը XI-XIII դարերում», Երևան, 1995, 127 էջ, «Հայաստանի միջնադարյան իրավունքը Ժ-ԺԳ դդ.», Երևան, 1996, 268 էջ, «Դրվագներ հայ իրավական միտքը պատմության», Երևան, 2006, 208 էջ, «Միջնադարյան հայ իրավունքը և իրավաքաղաքական մտքի (X-XIII դդ.), 2008, 285 էջ, «Հայ իրավունքի հուշարձաններ (V-VIIIդդ.)», Երևան, 1994, 48 էջ (համահեղինակությամբ Հայկ Խաչատրյանի), Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Երևան, 2010 (696 էջ):

Նշված աշխատություններում հանգամանորեն քննարկվում են միջնադարյան ժամանակաշրջանի հայ իրավունքի աղբյուրները, իրավունքի առանձին ճյուղերի բովանդակությունը,

իրավահամեմատական վերլուծության են ենթարկվել նույն դարաշրջանի հայ իրավական հուշարձանները, ինչպես նաև լուսաբանվել են միջնադարյան ժամանակաշրջանի հայ անվանի մտածողների, օրենսդիրների և օրենսգետների իրավաքաղաքական հայացքները, բացահայտվել են դրանց տեսական-ճանաչողական և գործնական-կիրառական առումները՝ արդի իրավամտածողության տեսանկյունից:

Իրավագիտության դոկտոր Ս. Հ. Հովհաննիսյանը «Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IXդդ.)», Երևան, 1970, 405 էջ, մենագրությունում ներկայացնում է վաղ ավատական Հայաստանի ամուսնաընտանեկան իրավունքի աղբյուրների և գրականության տեսությունը: Սկզբնաղբյուրների օգտագործմամբ հեղինակը բացահայտել է աշխարհիկ-կրոնական ընտանեկան իրավունքի ծագումը, սկզբունքները, ընտանիքի ձևերը, կազմը և գործառույթները, նշանադրության և պսակադրության կարգը վաղ ավատական Հայաստանում:

1974թ. ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի իրավաբան-գիտնականների համատեղ ջանքերով լույս տեսավ «Սովետական Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» երկհատորանոց հիմնարար մենագրությունը, որում հանգամանորեն լուսաբանվում են Խորհրդային Հայաստանի պետության և իրավունքի ձևավորման ու զարգացման հիմնական դրվագները: Նշված աշխատությունն աչքի է ընկնում հարուստ աղբյուրագիտական և արխիվային նյութերով, ինչը հեղինակներին թույլ է տվել լիարժեքորեն բացահայտել խորհրդային պետության կառուցվածքը և իրավունքի հիմնական ճյուղերի առանձնահատկությունները: Աշխատանքն ունի զգալի պատմաճանաչողական և գիտատեսական նշանակություն:

Ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ 2008թ. լույս ընծայվեց Ռուբեն Ավագյանի և Ռաֆայել Ավագյանի աշխատասիրությամբ «Հայ իրավական մտքի ակունքները» հիմնարար աշխատությունը (856 էջ), որում հեղինակները հանգամանորեն քննարկել են հայ իրավունքի ձևավորման և զարգացման հարցերը հնագույն ժամանակներից մինչև Արարատյան (Ուրարտական) թագավորությունը ներառյալ: Աշխատությունում զետեղված են նաև իրավական հուշարձանների (շումերական, բաբելոնական, ուրարտական) տեքստերը:

Աշխատությունն անգնահատելի ձեռնարկ է հայ իրավունքի և

ընդհանրապես՝ համընդհանուր իրավունքի պատմությունն ուսումնասիրողների համար:

բ) Իրավունքի տեսություն և փիլիսոփայություն

Իրավունքի տեսության և փիլիսոփայության բնագավառում պետաիրավական հետազոտությունների բաժնի գիտնականները նույնպես կատարել են զգալի աշխատանք: Հատկապես առանձնանում է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Ստեփանյանի հիմնարար մենագրությունը՝ «Իրավունքի տեսության հիմնահարցերը, ֆենոմենոլոգիական մոտեցում», Երևան, 2006, 656 էջ: Աշխատությունում ներկայացված է իրավունքի ֆենոմենոլոգիական հայեցակարգը, որը ներառում է միմյանց փոխլրացնող իրավունքի ռացիոնալ տեսությունը և իրավական կենսաշխարհի մասին ուսմունքը:

Հայ իրավագիտության նվաճումներից է Հ. Ստեփանյանի «Իրավունքի փիլիսոփայություն» հիմնարար աշխատությունը (700 էջ), որում ներկայացվում է իրավունքի փիլիսոփայության հեղինակային հայեցակարգը, որի հիմքում ընկած է արդիականացված աստվածակենտրոն աշխարհայացքը, ըստ որի բանականությունը և հավատը, գիտությունը, փիլիսոփայությունը, իրավունքը և կրոնը ոչ թե հակադրված, այլ փոխադարձաբար լրացնում են միմյանց:

Պրոֆեսոր Հ. Ստեփանյանի իրավունքի տեսության վերաբերյալ ինքնատիպ աշխատություններից են նաև «Նոր իրավաբմբռնման անհրաժեշտությունը» (Երևան, 2011, 264 էջ), «Իրավունքի գոյաբանություն» (Երևան, 2012, 224 էջ): Առաջինը նվիրված է նոր իրավաբմբռնման անհրաժեշտության խնդիրներին և իրավունքի ֆենոմենոլոգիական մոտեցման ընդհանուր բնութագրին, իսկ երկրորդ մենագրությունը՝ իրավունքի գոյության, էության և գոյության պայմանների ֆենոմենոլոգիական հիմնախնդիրներին:

Իրավունքի տեսության բնագավառի ձեռքբերումներից է նաև Գ. Հ. Սաֆարյանի «Պետության և իրավունքի տեսություն» (ուսումնական ձեռնարկ), Երևան, 1996, 72 էջ, «Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմատեսական վերլուծություն)», (Երևան, 2004, 256 էջ), «Իրավահասկացման հիմնական տիպերը» (Երևան, 2016, 236 էջ) աշխատությունները: Նշված աշխատություններում հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել իրավաստեղծ

գործունեության բարելավման հետ կապված հիմնախնդիրները, իրավահասկացման դասական և ոչ դասական հայեցակարգերը և դրանց առանձնահատկությունները: 2016թ.-ին լույս տեսավ Պետահիրավական հետազոտությունների բաժնի դոկտորանտ Տիգրան Սաֆարյանի «Ժամանակակից իրավական համակարգերը» (Երևան, 2016, 136 էջ) մենագրությունը, որում հանգամանորեն վերլուծության է ենթարկվել ժամանակակից իրավական համակարգերի էությունը և առանձնահատկությունները:

գ) Սահմանադրական և եվրոպական իրավունք

Սահմանադրական իրավունքի և սահմանադրականության հիմնախնդիրների ուսումնասիրության բնագավառում ակնառու է իրավագիտության դոկտոր Հ. Մ. Խաչատրյանի ներդրումը: Այս կապակցությամբ կարելի է վստահորեն պնդել, որ հայ սահմանադրականության հիմնադիրն արդի ժամանակաշրջանում հանդիսացել է Հենրիկ Խաչատրյանը՝ իր ծանրակշիռ մենագրություններով և բազմաթիվ գիտական հոդվածներով: Դրանցում հատկապես առանձնանում է նրա հիմնարար բնույթի մենագրությունը՝ «Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը» աշխատությունը, որը թարգմանվել է անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Նշված մենագրությունում հեղինակը հայ իրավագիտության մեջ առաջին անգամ խորքային վերլուծության է ենթարկում ՀՀ Սահմանադրությունը: Համակարգային և համեմատական-իրավական վերլուծության են ենթարկված սահմանադրական կարգի սկզբունքները, մարդու և քաղաքացու իրավական վիճակի հիմունքները, հանգամանորեն վերլուծված է պետական իշխանության ինստիտուտի կարգավիճակը, նրանց փոխհարաբերությունների բնույթը, տարածքային կառավարման նոր տեսանկյունները և տեղական ինքնակառավարման հիմունքները: Աշխատությունում մշակված գիտական հանձնարարականները և առաջարկությունները կարող են օգտակար լինել օրենսդիր, գործադիր և դատական մարմինների աշխատակիցների համար:

Եվրոպական իրավունքի և ազգային սահմանադրական իրավունքի տեսության ու պրակտիկայի խնդիրներին է նվիրված իրավագիտության դոկտոր Գևորգ Կոստանյանի «Պետության հայեցողությունը և դրա սահմանները եվրոպական կոնվենցիոն իրավական կարգավորումների համատեքստում (ձերբակալում, կալանավորում և արդար

դատաքննություն, Երևան, 2017, 551 էջ) մենագրությունը, որում հեղինակը գիտական և գործնական մակարդակով քննարկման առարկա է դարձրել Հայաստանի Հանրապետության՝ Եվրոպական խորհրդին անդամակցելուց հետո Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի վավերացմամբ պայմանավորված պետություններին տրամադրվող կոնվենցիոն նորմերի կիրառման հայեցողության և դրա սահմանների էությունն ու բովանդակությունը: Նշված աշխատությունում հիմնարար վերլուծության են ենթարկվել անձի անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքները Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում և գործնական մակարդակով սահմանվել են անձի ազատության ու անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքների սահմանափակման պետության թույլատրելի հնարավորությունները:

<u>դ) Քրեական իրավունք</u>

Հայաստանի երեք Հանրապետությունների քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի հիմնահարցերը գիտական պատշաճ մակարդակով ուսումնասիրվել է պրոֆեսոր Ռ. Զ. Ավագյանը՝ իր մի շարք մենագրություններում և բազմաթիվ գիտական հոդվածներում: Հեղինակի՝ «Доведение до самоубийства, как уголовно- наказуемое деяние» Ереван, 1971, 132 с., «Բնության քրեաիրավական պահպանումը». - Հայաստանի բնություն, 1975, պրակ. 1, «Հանցավորությունը Հայաստանի Առաջին Հանրապետությունում (1918-1980թթ.)», Երևան, 1995, «Հանցավորությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում». - Օրենք և իրականություն, 1998, թիվ 3-4, Հանուն օրինականության, Երևան 2002, «Սևանա լճի իրավական պաշտպանությունը», Երևան, 2004, «Մարդու իրավունքներ, քրեաիրավական երաշխիքներ», Երևան, 2007 աշխատություններում հանգամանորեն և բազմակողմանի վերլուծության են ենթարկվել հանցավորություն ծնող պատճառները, դրանց վերացման միջոցներն ու եղանակները, ինչպես նաև քրեական օրենսդրության կատարելագործման հիմնական ուղղությունները: Ռոբերտ Ավագյանի մի շարք առաջարկություններ իրենց արտացոլումն են գտել ՀՀ գործող քրեական օրենսգրքում:

ե) Մարդու իրավունքներ

Մարդու իրավունքների և անձի իրավական կարգավիճակի հետ կապված հիմնահարցերը հանգամանորեն հետազոտվել են իրավագիտության թեկնածու Լ. Ղազանչյանի գիտական հոդվածներում և հատկապես՝ «Անձի իրավական դրության հիմնախնդիրները ժողովրդավարական իրավական պետությունում» (Երևան, 2015, 228 էջ) մենագրությունում, որում հեղինակը համակարգված և ամբողջական վերլուծության է ենթարկել անձի իրավական դրության տեսական և գործնական ասպեկտները, ինչպես նաև բացահայտել է անձի իրավունքների, ազատությունների, պարտականությունների առանձնահատկությունները պետության փոխհարաբերություններում:

զ) Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը

Հայոց ցեղասպանության հետ կապված իրավական ասպեկտների հիմնախնդրով հրատարակվել է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Հ. Սաֆարյանի «Հայոց ցեղասպանության պատմահրավական ասպեկտները» (Երևան, 2015, 120 էջ) մենագրությունը, որում հանգամանորեն լուսաբանվել են Հայոց ցեղասպանության պատմահրավական ասպեկտները, վերլուծվել են ցեղասպանության հանցակազմի տարրերը, ինչպես նաև ցեղասպանության համար միջազգային իրավաբանական պատասխանատվության հարցերը:

Հեռանկարները

Պետահրավական հետազոտությունների բաժինը տեսանելի հեռանկարում (առաջիկա տարիներին) ծրագրավորել է շարունակել պատմատեսական, սահմանադրահրավական, անձի կարգավիճակի հետ կապված հարցերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018-2030 թվականների զարգացման ծրագրում ներառված պետականության և իրավական հարցերի վերաբերյալ հետազոտությունների իրականացման աշխատանքները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում սեղմ շարադրանքով ներկայացվում է „ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի «Պետա-

իրավական հետազոտություններ» բաժնի գործունեության հիմնական ուղենիշերը. հայ իրավունքի և իրավական մտքի պատմության, իրավունքի տեսության և փիլիսոփայության, քրեական իրավունքի, սահմանադրական և եվրոպական իրավունքի, մարդու իրավունքների և իրավական կարգավիճակի, հայոց ցեղասպանության իրավաբանական պատասխանատվության հիմնախնդիրների ուսումնասիրության բնագավառում:

Բանալի բառեր՝ պետաիրավական հետազոտություններ, իրավունք, իրավունքի պատմություն, իրավունքի տեսություն, մարդու իրավունքներ, ազգային իրավական համակարգ:

ИСТОРИКО-ПРАВОВОЙ ОБЗОР НАУЧНОГО НАСЛЕДИЯ ОТДЕЛА ГОСУДАРСТВЕННЫХ И ПРАВОВЫХ ИССЛЕДОВАНИЙ ИНСТИТУТА ФИЛОСОФИИ, СОЦИОЛОГИИ И ПРАВА НАН РА

Гарник Сафарян
Доктор юридических наук, профессор
главный специалист Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье кратко представлены основные аспекты деятельности отдела «Государственно-правовых исследований» по тематикам: история армянского права и правовой мысли, проблемы теории государства и права, конституционного и европейского права, современные подходы к правам человека, а также актуальные проблемные вопросы юридической ответственности за геноцид армян.

Ключевые слова: государственно-правовые исследования, право, история права, теория права, права человека, национальная правовая система.

HISTORICAL-LEGAL OVERVIEW OF THE SCIENTIFIC LEGACY OF THE DEPARTMENT OF STATE AND LEGAL STUDIES OF INSTITUTE OF PHILOSOPHY, SOCIOLOGY AND LAW NAS RA

Garnik Safaryan
Doctor of Law, Professor, Main Researcher of the Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

SUMMARY

In the article succinctly presents the main aspects of the activity of the "State Legal Research" department by the subjects: the history of Armenian law and legal thought, the problems of the theory of state and law, constitutional and European law, modern approaches to human rights, as well as actual problematic issues of the legal responsibility of the Armenian Genocide.

Key words: state legal research, law, history of law, theory of law, human rights, national legal system.